

ՀԱԿԸՆԴՂԵՄ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀՆՉԵՐԱՆՊԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԲԱՆԱԿՈՐ ԵՎ զՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ

Շ. Յ. ՊԱՐՈՆՅԱՆ, Լ. Ա. ԲԵՔԱՐՅԱՆ

Մարդկային փոխհարաբերությունների ձևավորման, զարգացման, ինչպես նաև կանոնակարգման գործում վճռորոշ դեր է կատարում հաղորդակցման գործընթացը, որի միջոցով խոսողները կարողանում են արտահայտել իրենց մտքերը, տեսակետները, զգացումները, բանակցել իրենց հուզող հարցերի շուրջ և այլն: Հակամարտությունը, որը, փաստորեն, մարդկային բացասական հույզեր, երբեմն լարվածություն, բռնություն պարունակող փոխհարաբերություն է, անհատների խոսքում դրսևորվում է հակընդդեմ երկխոսության տեսքով: Վերջինս ունի հաղորդակցական իր կադապարը՝ զրուցակիցների, հաղորդակցման նպատակի, թեմայի, խոսքային գործունեության իրականացման եղանակի և ձևի յուրահատուկ համալիր ամբողջություն, որը բնորոշվում է ներհակական փոխհարաբերություններով: Քանի որ բանավոր և գրավոր խոսքն ունի իր յուրահատուկ դրսևորումները, հակընդդեմ երկխոսության հնչերանգը բնութագրելու համար մենք կանդադարանանք խոսքի այս երկու ձևերին առանձին:

Հակընդդեմ հաղորդակցման մեջ կարևոր է ոչ միայն այն, թե ինչպիսի լեզվական միջոցներ են զրուցակիցներն ընտրում միմյանց հետ հակամարտելիս, այլև ինչպես են նրանք կիրառում սույն միջոցները հակամարտության ընթացքում: Սովորաբար հակամարտողները փորձում են զանազան ձայնային-առոգաբանական տարրերի միջոցով համապատասխան արտահայտչական ու զգացական երանգավորում հաղորդել իրենց խոսքին:

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու ունի հնչերանգի, ռիթմի և ձայնային որակների իրեն հատուկ ելևէջների ներդաշնակ համակարգ: Դրա հետ մեկտեղ՝ յուրաքանչյուր լեզվի արտասանական համակարգում գոյություն ունեն օրինաչափություններ և կանոններ, որոնց չիմացությունը կարող է ծախողել հաղորդակցման գործընթացը կամ նույնիսկ նպաստել զրուցակիցների միջև հակընդդեմ հաղորդակցման զարգացմանը: Այսպես, օրինակ, բրիտանական առոգանության կանոնների համաձայն՝ զրուցակցի խոսքի ուժգնությունը և տոնի բարձրությունը վկայում են վերջինիս ագրեսիվ մտադրությունների մասին¹: Սակայն նշված առոգաբանական առանձնահատկությունները կարող են ակամայից կիրառվել դրանից անտեղյակ օտարերկրացու կողմից, որը, ամենևին չունենալով նման մտադրություններ, կարող է անկիրթ և կոպիտ զրուցակցի տպավորություն թողնել:

¹ Տե՛ս J. Gumperz, Sociocultural Knowledge in Conversational Inference // Linguistics and Anthropology. Washington, 1977, էջ 191-211:

Թե՛ բնախոսների, թե՛ հոգեբանների կողմից բազմիցս նշվել է, որ խոսողի հոգեֆիզիոլոգիական վիճակը, նրա նյարդային համակարգի առանձնահատկությունները կարող են իրենց անմիջական արտացոլումը գտնել խոսքի ոչ միայն բառաբերականական, այլև հնչերանգային մակարդակներում²: Հետևաբար, հնչերանգի ընտրությունը անմիջականորեն պայմանավորված է հաղորդակցման մասնակիցների հուզական վիճակով: Այս ուղղությամբ կատարված որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ անհատի հուզական լարվածության դեպքում փոխվում է նրա խոսքի արագությունը, ձայնի բարձրությունը, ինչպես նաև խոսքային դադարների տևողությունը³: Այսպես, օրինակ, անգլերենում ծայրահեղ զգացմունքայնությամբ օժտված այն ասույթները, որոնք արտահայտում են խոսողի դժգոհությունը, գայրույթը կամ վրդովմունքը տվյալ իրողության վերաբերյալ, սովորաբար արտասանվում են իջնող տոնով: Ակնհայտ է, որ անհնար է ուսումնասիրել հակընդդեմ երկխոսության հնչերանգային բնութագիրը բանավոր խոսքում՝ առանց համապատասխան ձայնագրությունների մանրամասն հնչյունաբանական վերլուծության: Սակայն նման աշխատանքը ենթադրում է թե՛ հոգեբանական, թե՛ տեխնիկական բնույթի խոչընդոտներ: Այսպես, ինչպես արձանագրում են մի շարք հետազոտողներ (Մըքքարթի, Քրիսթըլ, Դեյվի), գիտակցելով, որ իրենց ձայնագրում են, խոսողները կաշկանդվում են և հաճախ իրենց անբնական են պահում: Եվ քանի որ նման ձայնագրությունների լեզուն չի կարելի համարել առօրյա խոսակցության բացարձակ մոուլ, հետազոտողներից ոմանք (Գուդվին, Հեթչ, Քրիսթըլ, Դեյվի, Գամփերս) հիմնականում նախընտրում են այսպես կոչված թաքուն ձայնագրման (sur-reptitious recording) մեթոդը: Իհարկե, Հայաստանում նման հետազոտություն կատարելը գրեթե անհնար է, քանի որ դա ենթադրում է անգլիախոս միջավայրի առկայություն, ինչպես նաև համապատասխան տեխնիկական սարք կիրառելու անհրաժեշտություն: Այդ պատճառով հակընդդեմ երկխոսության հնչերանգային բնութագիրը բանավոր խոսքում ուսումնասիրելու համար մենք փաստական նյութ ենք ընտրել անգլոամերիկյան գեղարվեստական կինոնկարներից քաղված ընտանեկան հակամարտություն ներկայացնող խոսքային մոուլները: Եթե սույն կինոնկարների լեզուն դիտարկենք բանավոր խոսակցական դիսկուրսին բնորոշ ժամանակային առանձնահատկությունների՝ խոսքի անմիջականության և ինքնաբերության տեսանկյունից, ապա այն, թերևս, չի կարող դասվել բանավոր խոսքի մոուլների թվին, քանզի նախօրոք մշակված է և խմբագրված: Սակայն, դրա հետ մեկտեղ, թե՛ բառապաշարային, թե՛ քերականական, թե՛ հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից կինոնկարների լեզուն շատ մոտ է բանավոր ինքնաբեր խոսքին, քանի որ սովորաբար ընդօրինակում է առօրյա հաղորդակցման դիսկուրսը և այս առումով կարող է արժեքավոր լինել

² Տե՛ս **В. И. Ильина**, К вопросу о вариантах речи. В кн.: “Интонация и звуковой состав”. М., 1965; **Н. И. Красногорский**, Новые данные по физиологии речевой деятельности. Журнал в. н. д. им И. П. Павлова, т. XVI, выпуск 4, 1956:

³ Տե՛ս **Л. А. Батурская**, Интонационные особенности инфинитивных конструкций с имплицитным отрицанием в английском языке (в сравнении с украинским языком) // Интонация. Киев, 1978:

բանավոր խոսքի հնչերանգային առանձնահատկություններն ուսումնասիրելիս: Դեռ ավելին, կիմոնկարներում հնչող խոսքը, որը նախատեսված է հանդիսատեսի կամ ունկնդրի համար, հնչերանգի առումով կարող է հավելյալ արտահայտչականություն և հուզականություն ձեռք բերել:

Անդրադառնալով հակընդդեմ հաղորդակցման գործընթացը բնութագրող հնչերանգային նշույթներին՝ ասենք, որ երբեմն խոսողն ինքը կարող է միտումնավոր կերպով կիրառել տվյալ իրադրությանը անհամապատասխան հնչերանգ՝ նպատակ ունենալով գրուցակցին դրդել հակամարտության: Միևնույն ժամանակ, հաղորդակցման գործընթացում համապատասխան հնչերանգի ընտրությանը կարող են նպաստել նաև այնպիսի արտալեզվական գործոններ, ինչպիսիք են հաղորդակցական նպատակը, միջավայրը, որտեղ ծավալվում է խոսքային գործունեությունը, ինչպես նաև այն հանգամանքը, թե ովքեր են հաղորդակցման մասնակիցները, ինչ հասարակական դիրք և փոխհարաբերություններ ունեն:

Ինչպես գիտենք, ըստ հաղորդակցման բնույթի և նպատակի՝ ընդունված է տարբերակել հետևյալ հնչերանգային ոճերը՝ *տեղեկատվական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական և առօրյա-խոսակցական*⁴: Այս ոճերից յուրաքանչյուրը բնութագրվում է իրեն հատուկ հնչերանգային նշույթներով: Այսպես, օրինակ, տեղեկատվական ոճի դիսկուրսին հիմնականում հատկանշական են խոսքի միջին արագությունը և ուժգնությունը, ինչպես նաև խոսողի ձայնի անկողմնակալ տեմբրը, մինչդեռ հրապարակախոսական ոճի դիսկուրսին հատուկ են խոսքի դանդաղությունը, ձայնի արտահայտչականությունը և ուժգնությունը, ինչպես նաև խոսողի ձայնի ինքնավստահ տեմբրը:

Առօրյա-խոսակցական ոճը, որը մեր հոգվածի ուսումնասիրության առարկան է, ունի անմիջական բնույթ և հիմնականում ծավալվում է մտերիմների, ընկերների կամ ծանոթների միջև: Այս ոճին բնորոշ գծերից մեկն այն է, որ գրուցակիցները սովորաբար ավելի ազատ են իրենց դրսևորում, անկեղծ են հաղորդակցման մեջ և խոսքը չեն «ծանրաբեռնում» ավելորդ քաղաքավարությամբ կամ զսպվածությամբ, բայց միևնույն ժամանակ նշանակալից տեղ են տալիս զգացմունքներին՝ փորձելով խոսքում դրանք արտահայտել ոչ միայն բառերի, այլև համապատասխան հնչերանգային և հարալեզվական միջոցների օգնությամբ: Թերևս նման միջոցների առկայությամբ էլ պայմանավորված են առօրյա խոսակցական ոճին բնորոշ հետևյալ գծերը՝ խոսքի հակիրճություն, անորոշություն, անավարտություն, խոսքային դադար և այլն: Խոսողն ակնհայտորեն ակնկալում է, որ գրուցակիցն իրեն կհասկանա նաև ոչ խոսքային միջոցների համատեքստից: Առօրյա-խոսակցական ոճին հատուկ հնչերանգային առանձնահատկություններից են ձայնի բարձրության հաճախակի փոփոխությունները և դադարները, իջնող և բարձրացող տոները, արագախոսությունը: Խոսելու ընթացքում, կախված խոսողի հուզական վիճակից, այս բնորոշիչները կարող են փոփոխություններ կրել:

⁴ St'u M. A. Соколова, К. П. Гиновт, И. С. Тихонова, Р. М. Тихонова, Теоретическая фонетика английского языка. М., 1991.

Հակընդդեմ հաղորդակցումը կարող է ծավալվել թե՛ բանավեճի, թե՛ կենցաղային վիճարանության տեսքով: Եթե առաջինն իր բնույթով մոտ է հրապարակախոսական ոճին, ապա երկրորդը ներկայացնում է առօրյա-խոսակցական ոճը, սակայն կարող է ունենալ նաև գեղարվեստական ոճին բնորոշ տարրեր: Այսպես օրինակ, գեղարվեստական ֆիլմերում կամ բեմադրություններում հիմնականում գերիշխում է առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերի համակցությունը:

Հակընդդեմ հաղորդակցման հնչերանգային առանձնահատկությունները բանավոր խոսքում ուսումնասիրելու համար որպես փաստական նյութ ենք ընտրել բրիտանական արտադրության ժամանակակից գեղարվեստական երկու կինոնկար՝ “Billy Elliot” («Բիլլի Էլլիոթ») և “All or Nothing” («Ամեն ինչ կամ ոչինչ»), որոնցում տեղ են գտել կենցաղային հակամարտություն ներկայացնող իրադրություններ: Կինոնկարներում հնչող խոսքը գրավոր վերարտադրելու նպատակով օգտվել ենք Ջ. Էդվարդսի⁵, Դյու Բուայի⁶ առաջադրած պայմանական հնչյունական նշանների համակարգերից՝ նկատի ունենալով դրանց՝ համապարփակ, մատչելի և դյուրին միջոցներով նշանների վերարտադրման եղանակը: (Հոդվածի վերջում տրված են պայմանական հնչյունական նշանները:)

Ի տարբերություն այնպիսի խոսքային ժանրերի, ինչպիսիք են, օրինակ, քարոզարշավները, բանավեճերը կամ դատապաշտպանական ճառերը, հակընդդեմ հաղորդակցման մեջ մասնակիցներից չի պահանջվում համապատասխան կրթական մակարդակ կամ պատրաստվածություն: Շատ դեպքերում ընտանեկան հակամարտությունը կարող է ունենալ անսպասելի բնույթ, իսկ երբեմն՝ անկանխատեսելի ընթացք ու ավարտ: Հաճախ հակամարտ խոսքի ընթացքը կախված է նաև այնպիսի արտալեզվական գործոններից, ինչպիսիք են հակամարտության մեջ ներգրավվածների հոգեկերտվածքը, նրանց միջև արդեն ձևավորված փոխհարաբերությունները, նախորդ հաղորդակցական փորձը և այլն: Փաստական նյութի մանրամասն ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հակընդդեմ հաղորդակցումը հատկապես արտահայտիչ է դառնում հարալեզվական մակարդակում: Հայտնի է, որ, ի տարբերություն որոշ հնչերանգային միջոցների, հարալեզվական միջոցների գործառույթը միայն համապատասխան դիրքորոշում արտահայտելն է⁷: Ընտանեկան հակամարտություն ներկայացնող իրադրություններում գրուցակիցները սովորաբար մտերիմ հարազատներ են և պարզապես անհրաժեշտ չեն համարում զսպել իրենց համակած զգացմունքները: Հաղորդակցման ընթացքում նրանք հաճախ են կիրառում այնպիսի հարալեզվական միջոցներ, ինչպիսիք են լացը, հեկեկոցը՝ վիրավորվածություն արտահայտելու համար, փնչոցները կամ փռթկոցները՝ արհամարհանք արտահայտելու, սուլոցները՝ զարմանք, տարածայնություն, իրադրության կամ գրուցակցի նկատմամբ ունեցած բացասական դիրքորոշում արտահայտելու համար:

⁵ Տե՛ս J. A. Edwards, *The Transcription of Discourse // Handbook of Discourse Analysis*. NY, 2006:

⁶ Տե՛ս J. et al Du Bois, *Outline of discourse transcription // Talking data: Transcription and coding in discourse research*. Hillsdale, NJ, 1993:

⁷ Տե՛ս D. Crystal, *Prosodic systems and Intonation in English*. Cambridge, 1969:

Բանավոր ընթացող հակընդդեմ հաղորդակցման գործընթացը ուղղորդվում է ոչ միայն լեզվի, այլև ձայնի որոշակի տոների, ելևէջների, շարժումների, դիմախառի, հայացքի միջոցով: Սույն բաղադրիչների ամբողջությամբ կարող է հուշել հաղորդակցման մասնակիցներին, թե ինչպիսի հուզական վիճակում է գտնվում զրուցակիցը: Երբեմն ձայնի ամենամանրանշան ելևէջն անգամ կարող է որոշակի տեղեկություն հաղորդել զրուցակցի տրամադրության, վերջինիս համակած դրական կամ բացասական զգացմունքների մասին: Որոշ լեզվաբանների կարծիքով, ձայնի ելևէջները, այսպես կոչված ձայնային տարբերակիչները (*differentiators*)՝ ծիծաղը, քմծիծաղը, լացը, հեկեկոցը և այլն, հաղորդակցման *հարալեզվական մակարդակում* արտացոլվող նշույթներ են*:

Փաստական նյութի մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակընդդեմ հաղորդակցում ներկայացնող իրադրություններում վերոհիշյալ նշույթների թիվը բավականին նշանակալից է, ընդ որում՝ դրանք բանավոր դիսկուրսում կարող են արտահայտվել համապատասխան հնչերանգի, ձայնին համապատասխան հուզաարտահայտչականություն հաղորդելու միջոցով: Այստեղ տեղին է խոսել նաև ձայնի որակի մասին, այսինքն՝ այն ազդեցության, որ կարող է թողնել խոսողի ձայնը ասույթի արտաբերման ընթացքում: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է տարբերակել ձայնի *նկարագրական* և *զրուցակցի կամ տվյալ իրադրության նկատմամբ խոսողի դիրքորոշումն արտահայտող որակներ*: Դիրքորոշում արտահայտող ձայնի որակը զուգակցվում է անհատի վարքագծի որոշակի դրսևորումների հետ և ըստ այդմ կարող է արտահայտել թշնամանք, բացասական դիրքորոշում, կատաղություն, զայրույթ, ագրեսիա և այլն: Դ. Զրիսթլը գտնում է, որ ձայնի նման որակի նպատակն է որոշակի ներգործություն թողնել զրուցակցի վրա և ստեղծել հաղորդակցման միջավայրին համապատասխան մթնոլորտ: Դիտարկենք նման մի օրինակ.

Penny: Where have you been\

Phil: Out and about (...) you know (N)

Penny: WHERE/

Phil: Been on a long run down =

Penny: You're supposed to be in taxi, Phil {...} ((shrilly)) What you doing with your radio switched off and your mobile/ {...} What's the point of having them if we can't get hold of you when we need you/

(*"All or Nothing"*)

Հակընդդեմ երկխոսության վերը բերված նմուշի մեջ կինը (Փենին) փորձում է ամուսնուց բացառություն պահանջել վերջինիս՝ տնից երկարատև բացակայության վերաբերյալ: Ամուսինը, սակայն, փորձում է խուսափել պատասխանից, ինչի մասին են վկայում նրա խոսքում տեղ գտած հուզական դադարները: Ամուսնու խուսափող պատասխանը վրդովում է կնոջը, և նրան համակած բացասական զգացմունքները բացահայտ դրսևորվում են

* Տե՛ս **D. Borisoff, D. Victor**, Conflict Management: A Communication Skills Approach. Allyn & Bacon, 1998; **R. P. Harrison**, Beyond Words: An Introduction to Nonverbal Communication. Englewood Cliffs, NJ, 1974; **S. Robbins and N. Langton**, Organizational Behaviour: Concepts, Controversies, Applications . Upper Saddle River, NJ, 2001:

պատասխան խոսքում. WHERE ասույթն արտաբերելիս Փենիի ձայնը որոշակի հուզական երանգ է ստանում, ուժգնանում, և նա ամուսնուն հասցեագրում է իր դժգոհությունը սուր և ճշացող ձայնով:

Խոսելով հնչերանգի փոխազդեցության գործառույթի մասին՝ նշենք, որ որոշ լեզվաբաններ⁹ հաղորդակցման գործընթացում առանձնացնում են գլխավոր (dominant) և ոչ գլխավոր կամ երկրորդական (non-dominant) խոսողներ և ըստ այդմ՝ գլխավոր և երկրորդական ձայնային տոներ: Գլխավոր տոնով խոսողները ազատ են ընտրության մեջ, այսինքն՝ կարող են ընտրել թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական ձայնի տոներ իրենց ասույթին համապատասխան հնչերանգ հաղորդելու համար, մինչդեռ երկրորդական տոնով խոսողները կարող են սահմանափակվել միայն երկրորդական տոնով: Տոների մեծ քաշխումը, անշուշտ, պատահական չէ, այլ պայմանավորված է այնպիսի արտալեզվական գործոններով, ինչպիսիք են հաղորդակցման մասնակիցների հարաբերությունները, կարգավիճակը, հասարակության մեջ զբաղեցրած դիրքը, տարիքը և այլն:

Հակընդդեմ հաղորդակցման մեջ գլխավոր տոնով խոսողները գրավում են հարձակողական դիրք՝ հանդես գալով մեղադրողի կամ կշտամբողի դերում, իսկ երկրորդական տոնով խոսողները պաշտպանվում են: Այսպես օրինակ, ստորև ներկայացված իրադրության մեջ կնոջը մեղադրող ամուսինը ընտրել է գլխավոր խոսողի ձայնային տոն, մինչդեռ կինը բավարարվում է միայն հակիրճ պատասխաններով: Միևնույն ժամանակ կնոջ հուզական վիճակն ու լարվածությունն իրենց անմիջական դրսևորումն են գտնում ոչ միայն հարալեզվական միջոցներով {հեկեկոց}, այլև անդրադառնում են նրա խոսքի բնախոսական առանձնահատկությունների վրա: Այդ մասին են վկայում բազմաթիվ հուզական դադարները, որոնք գերագույն լարվածության հետևանք են և խոսելու ընթացքում արտահայտվում են անկանոն շնչառությամբ ու ջղակարկամությամբ:

Phill: *You ain't loved me for years \ (...) You don't like me. \ You don't respect me. You talk to me like I'm a piece of shit *

Penny: *((Sobs)) I (...) don't. /*

Phill: *You do.*

Penny: *((Sobs)) I (H) I (H) I (...) don't, Phil. / I don't talk to you like you're a piece of shit.*

("All or Nothing")

Հաղորդակցման գործընթացին բնորոշ համագործակցության սկզբունքները կարող են խախտվել, երբ տեղի է ունենում երկու միմյանց հակասող գնահատականների ընդհարում, այսինքն՝ խոսողի գնահատականը չի համապատասխանում խոսակցի գնահատականին: Նման դեպքերում հաճախ հանդիպում ենք գնահատականների շուրջ ծագած երկխոսություն-վիճաբանությունների: Ուսումնասիրությունները¹⁰ ցույց են տալիս, որ

⁹ Տե՛ս **D. Brazil, M. Coulthard, C. Johns**, Discourse Intonation and Language Teaching. London, 1980; **M. McCarthy**, Spoken Language and Applied Linguistics. Cambridge, 1998:

¹⁰ Տե՛ս **И. А. Афонская**, Просодические средства реализации коннотативных значений некоторых английских прилагательных. В кн.: "Просодические средства организации стилистически различных текстов в современном английском языке", М., 1985:

բացասական գնահատական պարունակող ածականները սովորաբար բնութագրվում են այնպիսի հնչերանգային նշույթներով, ինչպիսիք են խոսքի միջին արագությունը, միջին ուժգնությունն ու տոնի փոփոխությունները: Եթե սույն ածականներին նախորդում է եղանակավորող մակբայ կամ անձնական դերանուն, ինչպես *so awful, too bad, you twat* շարույթներում, ապա խոսողը նախքան բացասական արժեք ունեցող ածականն արտասանելը զգալի դադար է առնում՝ գրուցակցի ուշադրությունն իր ասածի վրա հրավիրելու, ինչպես նաև իր խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով: Ստորև բերված երկխոսությունը նման մի դեպքի օրինակ է.

Tony: ((loudly)) *You been playing my records, you (...) twat *

Billy: *I never played naught /*

Tony: *Knobhead *

(“*Billy Elliot*”)

Այժմ տեսնենք, թե ինչպես է բնութագրվում հակընդդեմ երկխոսությունը գրավոր խոսքում: Եթե բանավոր խոսքում այնպիսի հնչերանգային տարրեր, ինչպիսիք են ձայնի բարձրությունը, արագությունը, դադարները, ունկնդրին որոշ տեղեկություններ են հաղորդում հաղորդակցման մասնակիցների տրամադրվածության, միմյանց նկատմամբ ունեցած զգացմունքների կամ դիրքորոշման վերաբերյալ, ապա գրավոր դիսկուրսում ընթերցողին այդ մասին հուշում են հեղինակի կողմից տեքստում միտումնավոր կիրառված այնպիսի տպագրական առանձնահատկություններ, ինչպիսիք են շեղատառը, տեքստի գունավորումը, որոշ ասույթների ամբողջությամբ մեծատառով կամ սովորականից ավելի մուգ տպատառով ներկայացնելը:

Սովորաբար տեքստում տեղ գտած նման հնարքները խոսքին որոշակի զգացմունքայնություն են հաղորդում և ընթերցողի ուշադրությունը հրավիրում ասույթի ենթատեքստի վրա: Երբեմն գրուցակիցների ձայնի ելևէջները, տոնի փոփոխությունները, ինչպես նաև հաղորդակցմանն ուղեկցող շարժումները վերարտադրելու նպատակով հեղինակը իր մեկնական ասույթում զետեղում է համապատասխան նկարագրություն, ինչպես ստորև ներկայացված օրինակում:

Henry (whirling and seizing *Mattie* by the throat): *Who are you? I know: Mattie. You sew for the heather and worry your husband's life out about dirt. Now in the grave they'll be plenty of dirt. And you sing, and you sing; and you talk and you talk.* (He grabs the remaining bottle and uncorks it.) *Drink this here bottle o' stuff.*

Mattie (clenching her teeth and fighting back): *I won't, I won't!*

(Հաստվածք՝ *Green P. Quark Medicin, N.Y., 1963, էջ 208-209:*)

Գրավոր դիսկուրսն ուսումնասիրելիս հատկապես կարևոր է ուշադրություն դարձնել կետադրական նշանների վրա, որոնք հակընդդեմ հաղորդակցման համատեքստում կարող են որպես հուզաարտահայտչական միջոց կիրառվել: Ինչպես ցույց է տալիս անգլո-ամերիկյան գեղարվեստական գրականությունից քաղված փաստական նյութի ուսումնասիրությունը, հակընդդեմ հաղորդակցում ներկայացնող գրավոր դիսկուրսում հեղինակը միտումնավոր կերպով «ավելորդ» կետադրություն է կիրառում: Այսինքն՝ կետադրական նշաններն այստեղ կատարում են ոչ միայն միտք արտահայտելու, այլև խոսքին արտահայտչականություն հաղորդելու գործառույթ, ինչպես նաև արտացոլում են հակամարտողների հոգեվիճակը:

Ավելի առարկայական լինելու համար ներկայացնենք այն հիմնական կետադրական նշանները, որոնք իրենց առանձնահատուկ գործառույթի շնորհիվ գերիշխում են հակընդդեմ երկխոսությունների գրավոր դիսկուրսում.

1. Բացականչական նշանի գործառույթը: Սույն նշանը կիրառվում է բացականչական նախադասություններում, սակայն հակընդդեմ հաղորդակցում ներկայացնող գրավոր դիսկուրսում այն կիրառվում է նաև այնպիսի ասույթների վերջում, որոնք իրենց բնույթով բնավ բացականչական չեն: Նման դեպքերում բացականչական նշանը մատնանշում է խոսողի դիրքորոշումը կամ վերաբերմունքը ասույթի բովանդակության նկատմամբ: Հատկանշական է նաև, որ հակընդդեմ հաղորդակցման ընթացքում բացականչական նշանը երբեմն տեղակայվում է իր համար անսովոր տեղում՝ ասույթի մեջտեղում: Հետևյալ իրադրության մեջ այս նշանը տեղադրված է երկու անգամ. նախադասության մեջտեղում՝ *silliness* բառից անմիջապես հետո, և նախադասության վերջում: Դրանով հեղինակը փորձում է հավելյալ արտահայտչականություն հաղորդել խոսողի՝ Ամանդայի ասույթին, ինչպես նաև ընթերցողին հուշել, որ Ամանդան հավանություն չի տալիս դատեր պահելածին:

Laura: [*panicky*] *Oh, Mother- you answer the door!*

Amanda: [*lightly*] *I'll be in the kitchen – busy!*

Laura: *Oh, Mother, please answer the door, don't make me do it!*

Amanda: [*...*] *Fuss, fuss – silliness! – over a gentleman caller!*

(Հատվածը՝ *Williams J., Six Modern Plays, N.Y., 1967, էջ 479:*)

Երբեմն բացականչական նշանը կարող է դրվել նաև հարցական նախադասության վերջում՝ արտահայտելով խոսողի զարմանքը կամ տարակուսանքը տվյալ ասույթի բովանդակության վերաբերյալ:

2. Բացականչական և հարցական նշանների համակցությունը՝ *!/? !/կամ !/?*: Սույն հնարը բազմիցս կիրառվում է հուզական խոսք ներկայացնող գրավոր դիսկուրսում, իսկ հակընդդեմ հաղորդակցման մեջ՝ այսպես կոչված հրահրող կամ թշնամական հարցերում: Նման հարցերի միջոցով հակամարտողները կա՛ն փորձում են անուղղակիորեն կշտամբել միմյանց, կա՛ն բացասաբար արձագանքել գրուցակցի՝ իրենց ուղղված նախատինքին կամ բողոքին:

3. Տրոհագծի և բազմակետերի միջոցով հաճախ արտահայտվում են հակընդդեմ հաղորդակցման՝ գրավոր խոսքում տեղ գտած հուզական դադարները: Հեղինակի կողմից մեծ դադարների կիրառումը խոսքում հիմնականում պայմանավորված է հերոսների հոգեվիճակի նկարագրության անհրաժեշտությամբ: Այսպես, ստորև բերված երկխոսության մեջ տրոհագծի կիրառումը մատնանշում է, որ հակամարտողներն անվերջ ընդհատում են միմյանց, քանզի գտնվում են ծայրահեղ զգացմունքային լարվածության մեջ:

Tom: *What in Christ's name am I –*

Amanda: [*shrilly*] *Don't use that –*

Tom: *Supposed to do!*

Amanda: *Expression! Not in my –*

Tom: *Ohhh!*

Amanda: *Presence! Have you gone out of your senses?*

Tom: *I have, that's true, driven out.*

Amanda: *What's the matter with you, you - big - big - Idiot!*

Tom: *Look - I have got nothing, no single thing -*

Amanda: *Lower your voice!*

Tom: *In my life here that I can call my own! Everything is -*

Amanda: *Stop that shouting!*

(*Հատվածը` Williams J., Six Modern Plays, N.Y., 1967, էջ 451:*)

Նշենք նաև, որ հակընդդեմ հաղորդակցման մեջ նման հուզական դարձումների գործառույթ կարող են կատարել նաև, այսպես կոչված, ժամանակ շահելու միջոցները:

Բանավոր խոսքի հնչերանգային և առոգարանական առանձնահատկություններն ուսումնասիրելիս դժվար չէ որոշ արտալեզվական տեղեկություն հավաքել խոսողի մասին՝ նրա ծագման, հասարակական դիրքի, կրթության վերաբերյալ և այլն: Գրավոր խոսքն ուսումնասիրելիս, իհարկե, դժվար է նման եզրակացություններ կատարել: Սակայն որոշ հեղինակներ իրենց գրական հերոսների հասարակական դիրքը ցույց տալու նպատակով երբեմն կիրառում են ոչ գրական, բարբառային խոսք՝ աղավաղելով բառի ուղղագրությունը, օգտագործելով խոսակցական կամ բարբառային քերականական ձևեր, օրինակ՝ *sez, wanna, gonna, ain't* համապատասխանաբար *says, want to, going to* կամ *haven't* բառերի փոխարեն: Դիտարկենք նման մի օրինակ.

Zero: *Speed it up a little, cancha?*

Daisy: *What's the rush? To-morrer's another day.*

Zero: *Aw, you make me sick.*

Daisy: *An' you make me sicker.*

(*Հատվածը` Rice E. The Adding Machine Best American plays 1918-1958, N.Y., 1961, էջ 102:*)

Բերված երկխոսությունն ընթանում է սևամորթ զույգի միջև: Ինչպես գիտենք, առօրյա խոսքում սևամորթների գործածած անգլերենը շեշտակիր են տարբերվում է գրական անգլերենից: Այսպես, սևամորթների խոսքում տարածված են այնպիսի քերականական և հնչյունաբանական աղավաղումներ, ինչպիսիք են *cancha, wanna, tomorrer* ձևերը՝ *can't you?, want to, tomorrow* տարբերակների փոխարեն: Ներմուծելով սույն աղավաղումներն իր հերոսների խոսքում՝ հեղինակը նպատակ է հետապնդում ընթերցողին հավելյալ արտալեզվական տեղեկություններ հաղորդել իր հերոսների մասին:

Ինչպես տեսնում ենք, գրավոր և բանավոր խոսքը տարբեր հնարավորություններ են ընձեռում հակընդդեմ երկխոսության հնչերանգը պատկերելու համար: Այժմ փորձենք ամփոփել մեր ուսումնասիրության արդյունքները:

Բանավոր խոսքում հնչերանգը համապատասխան զգացական երանգավորում է հաղորդում ասույթին՝ արտահայտելով խոսողի դիրքորոշումը տվյալ իրադրության նկատմամբ: Այսպես, հակընդդեմ երկխոսության ընթացքում սովորական թվացող ասույթը կարող է ներհակական իմաստ ձեռք բերել համապատասխան հնչերանգով արտասանելու դեպքում՝ դրան զուգակցելով համապատասխան հարալեզվական միջոցների կիրառումը: Բա-

նավոր ընթացող հակընդդեմ հաղորդակցումը հատկապես արտահայտված է դրսևորվում հարալեզվական ու բնախոսական մակարդակներում և բնութագրվում է այնպիսի հնչերանգային նշույթներով, ինչպիսիք են ձայնի բարձրությունը, թշնամանք կամ բացասական դիրքորոշում արտահայտող ձայնի որակները, տոնի կտրուկ և հաճախակի փոփոխությունները, հուզական դադարը, խոսքի միջին արագությունը և այլն: Գրավոր դիսկուրսում հակընդդեմ երկխոսությանը հատուկ հնչերանգային-առոգաբանական առանձնահատկությունների պակասը լրացվում է հեղինակի կողմից մեկնական ասույթների, տեքստի տպագրական առանձնահատկությունների, ինչպես նաև կետադրական նշանների օգնությամբ:

Պայմանական հնչյունական նշաններ

(!)	շեշտված բառ կամ կառույց
{ . . }	կարճատև դադար
(...)	միջին տևողության դադար
(N)	երկարատև դադար
/	բարձրացող հնչերանգ
\	իջնող հնչերանգ
(H)	անկանոն շնչառություն և ջղակարկամություն
(())	հետազոտողի դիտողությունը
=	խոսքի ընդհատում

Ш. А. ПАРОНЯН, Л. А. БЕКАРЯН - *Интонационная характеристика противодействующего диалога в устной и письменной речи.* - В статье рассматривается роль интонации в оформлении речи конфликтующих собеседников. Авторы уделяют внимание интонационным средствам выражения антогонистических мыслей и отрицательных эмоций в устной речи, а также описывают их графическое изображение в письменном тексте.